քանի շրջապատից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ անգոբի կտորներ, թասերի ու քրեղանների բեկորներ, որոնք նկարազարդված են կանաչ և դեղին ջնարակով։ Սրանք անգոբը հեռացնելու և գծազարդման տեխնիկայով են արված։ Նման ոճը, ինչպես և ջնարակի պայծառ գույները բնորոշ են XII—XIII դդ.։ Այդ բեկորների մեջ առանձնանում է ջնարակած թասի մասը, որի վրա հայերեն Այ տառերն են կարդացվում։ Պետք է ենթադրել, որ այն կամ վարպետի պատվիրատուի անվան կամ, պարզապես, ասված բառի հապավումը պետք է լինի։ Պեղավայրում գտնվեցին նաև լայնափոր կճուճներ, սափորներ (թերի)՝ մեկ կամ երկու կանթով։ Հայտնաբերվեցին կարասի բեկորներ, որոնց գոտիները, ինչպես և սափորների և կճուճների պսակները, ցորենի հասկ հիշեցնող, ալիքավոր, ակոսավոր և տարբեր ձևերով են նկարազարդված (աղ. II, 1)։ Այստեղ էլ նույն XII—XIII դդ. բնորոշ գծազարդման ու փորագրման տեխնիկան է, որը հայտնի է դեռևս IX—X դդ.։ Պեղման ընթացքում դուրս եկան կանաչ գույնի երկու ձիթաճրագ և երկու կլոր աղաման (աղ. I, 5, II, 3)։ Բավականին շատ են մետաղե իրերը։ Դրանք երկաթե գամեր են (աղ. II, 2), դանակի շեղբեր, պայտեր և աշխատանքային գործիքներ, որոնք, սակայն, չափազանց քայքայված են։ Վառարանի շրջապատից հայտնաբերվեց մեծ քանակությամբ մետաղե թափոն։ Հնագիտական այս համալիրում գտնված դրամների հետ միասին թվագրվում է XII—XIII դդ., որը և հիմք է տալիս նույն ժամանակին վերագրելու և վառարանը։ Ստորին բերդում բացված հնոցն առայժմ միակն է բոլոր այն հնոցներից, որոնք եղել են Դվինում։ Իսկ որ դրանք եղել են քաղաքում, հաստատվում են մեզ հասած բազմաքանակ արտադրական խոտանով, թրծման պարագաներով և ճաշակով նկարազարդված տեղական խեցեղենով։

Այսպիսով, պեղված նյութերը հնարավորություն են տալիս հավաստելու, որ Դվինում եղել են խեցեղեն թրծելու XII—XIII դդ. վառարաններ, որոնք որակական փոփոխություններ են մտցրել բրուտագործության մեջ։ Բացված կառույցի և պեղածո նյութերի քննությունը կասկած չի թողնում, որ մենք գործ ունենք նույն դարերի խեցեգործական ոչ մեծ մասշտաբի արտադրության արհեստանոցի և հնոցի հետ, որտեղ թրծվել է ժամանակի համար ամենասովորական և միևնույն ժամանակ ամենամասսայական ջնարակած խեցեղենը։

Ֆ. Ս. ՔԱՐԱՅԱՆ

ՍԻՍԻԱՆԻ ԱՐԾԱԹՅԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՍԵՐՆ ՈՒ ՍԿԱՀԱԿՆԵՐԸ

Հայաստանը մետաղամշակության հնագույն բնօրաններից մեկն է, այստեղ մետաղի գեղարվեստական մշակումը գալիս է դարերի խորքից։ Մինչև վերջին տարիներս, Հայաստանի հելլենիստական դարաշրջանի տորևտիկան գրեթե անհայտ էր։ Գառնիում, Արտաշատում, Սիսիանում և այլ վայրերում կատարված պեղումների և պատահարար հայտնաբերված մետաղյա մի շարք գեղարվեստական իրերի շնորհիվ հնարավոր դարձավ ծանոթանալ անտիկ շրջանի տորևտիկայի հետ։

Գեղարվեստական մետաղի մեջ իրենց ուրույն տեղն ունեն Սիսիանից հայտնաբերված արծաթյա թասերն ու սկահակները։ Թասերը, որոնցից երեքը համեմատաբար լավ են պահպանվել, չափերով իրարից քիչ են տարբերվում (տր. 10—12,2 սմ, բարձր. 6,2—7 սմ, քաշը 405,15—415,30 գր.)։ Բոլորի պսակները դեպի ներս են լայնանում և կլորանում (աղ. I, 4—7, II, 1, 2, III, 3, 4)։ Թասերից երկուսի պսակը զարդարված է լայնքով հաջորդաբար տարված մեկ և երկու փորագիր գծերով (աղ. I, 4)։ Թասերից մեկն առանձնանում է իր շքեղ հարդարանքով (տր. 11,8 սմ, բարձր. 6,2 սմ, քաշը 405,15 գր.)։ Նրա արտաքին մակերեսը բաժանված է ութ հավասար մասերի, որոնցից չորսը բաղկացած են ուղղահայաց առևակոսներից (յոթ հատ)։ Մյուս չորսը հարդարված են սուր երկարավուն, հավանաբար, նետաբույսի (Sagittaria) տերևներով և վերջիններիս երկու կողքերին տեղադրված քիչ ոնավորված խաղողի վազերով։ Պատկերը վերևից շրջափակված է կետերից կազմված, երկու զուգահեռ գոտիների մեջ վերցված պարանահյուսով, իսկ ներքևում՝ հատակն ընդգծող համակենտրոն երեք շրջանով (աղ. II, 1, 2)։

Բոլոր թասերը պատրաստված են ձուլելու եղանակով, իսկ զարդերն արված են փորագրելու և դրվագելու միջոցով։ Աշխատանքը կատարված է բավական խնամքով։ Տրված են բուսական զարդերի բոլոր մանրամասները, նույնիսկ տերևների միջնաջիղերն ու երակները։



Աղյուսակ I

Այս տեխնիկան կիրառվում էր հատկապես մ. թ. ա. I դարում[1]։

Հելլենիստական շրջանի բրոնզյա կիսագնդաձև թասեր հայտնաբերվել են հարավ-արևմտյան Հայաստանից՝ Աշվանից[2]։ Այդօրինակ թասերը Հին Արևելքում, պաշտամունքային արարողությունների ժամանակ, ծառայել են աստվածներին հեղումներ կատարելու համար։ Սակայն հետագայում նրանք կորցրեցին իրենց այդ նշանակությունը, ձեռք բերելով կիրառական բնույթ[3]։ Վերջիններիս են հարում նաև Սիսիանի կիսագնդաձև թասերը, որոնք թվագրվում են մ. թ. ա. II—I դդ։

Բուսական զարդերով, Սիսիանի թասին նման արծաթյա թաս հայտնի է Մարաստանից,

[1] К. В. Тревер, Памятники греко-бактрийского искусства, М.—Л., 1940, էջ 35—36։

[2] St. Mitchell, Aşvan kale, Anatolian Studies, vol. XXIII, 1973, նկ. 23, 3; D. H. French, Aşvan Excavations, 1969, Keban project 1969 Activities, Ankara, 1971, էջ 36, տպ. 30, 4։

[3] К. В. Тревер, Греко-бактрийская золотая чаша, «Сокровища Эрмитажа», М.—Л., 1949, էջ 101—102։

գտնված Նեհավենդի մոտ, այսպես կոչված «Կարենների գանձարանի» մեջ և պահվում է Բեռլինի թանգարանում (աղ. II, 3, 4)։ Այս թասն ավելի կատարյալ մշակում ունի։ Նրա վրայի զարդերի դասավորությունը նույնն է, այն տարբերությամբ, որ չորս մասում պատկերն իրենից ներկայացնում է խաղողի տերևի ձևի ականթ։ Հատակը ձևավորված է վարդյակով, որը բաղկացած է չորս ականթից և քառատերև լոտոսից։ Այստեղ առևակոսները վեցական են։ Շրթի մոտ կա հունարեն երեք տառ՝ ΡΧΑ (տր. 14,5 սմ)։ Ե. Հերցֆելդը նշում է բուսական այդ զարդերի հելլենիստական բնույթը, գտնելով միաժամանակ, որ այն ունի ընդգծված աքեմենյան տարրեր[4]։ Նա թասը համարում է նախասասանյան, այլ կերպ ասած՝ բակտրիական բնույթի, իսկ տառերը՝ պարթևական կամ քուշանական, հունարեն գրչությամբ արված և թվագրում է մ. թ. ա. II—I դդ.[5]։ Դ. Ե. Սթրոնգը, ուսումնասիրելով գեղարվեստական մետաղի նմուշներն ընդհանրապես, գտնում է, որ այս նմուշը հելլենիստական տիպի գինու թասերից է և համարում է մինչ մ. թ. ա. II դարի սիրիական արտադրանք[6]։ Թասն ուսումնասիրության առարկա է դարձրել նաև Ռ. Ցանը։ Վերջինս բուսական զարդամոտիվները կապում է հելլենիստական Եգիպտոսի արվեստի հետ և գտնում է, որ թասի վրա իրանա-ասիական տարրեր չկան, որ այն կարող էր պատրաստվել Ասիայի հունական գաղութներից մեկում, մ. թ. ա. III դարում[7]։

Թեև կիսագնդաձև արծաթյա և բրոնզյա թասեր Հայաստանում առաջին անգամ են ի հայտ գալիս, բայց Սիսիանի թասերի ձևը շատ տարածված է խեցեղեն և ապակյա անոթների շարքում։ Կիսագնդաձև խեցեղեն անոթները հանդիպում են դեռևս ուրարտական շրջանում և դանազան ձևափոխություններով շարունակվում են նաև մ. թ. առաջին դարերում։ Սակայն խեցեղենի այդ ձևն առավել տարածված է եղել հելլենիստական շրջանում։ Արմավիրից, Արտաշատից, Գառնիից, Աշվանից և այլ վայրերից հայտնաբերված կիսագնդաձև թասերը հարդարված են գունավոր, երկրաչափական ու բուսական տարբեր զարդերով։ Թասերի պսակի վրա լայնքով հաջորդաբար տարված մեկական և երկուական գծերը հելլենիստական գունազարդ խեցեղենի ամենատարածված զարդերից են։ Սիսիանի թասի վրայի բուսական զարդերից խաղողը վաղուց է հայտնի Հայաստանում, իսկ նետաբույսը հանդիպում է ինչպես Փոքր Ասիայում և Միջերկրական ծովի առևելյան ափերին, այնպես էլ Հայաստանում։

Թեև Սիսիանի թասի զարդերն ավելի պարզունակ են և համեմատաբար պակաս վարպետությամբ կատարված, բայց. ըստ երևույթին, Նեհավենդի և Սիսիանի թասերը նույն արհալի (գուցե և նույն կենտրոնի) արտադրանք են և ժամանակակից են իրար։ Ինչ վերաբերում է թասերի արտադրության վայրերին, ապա հայտնի է, որ դրանք ընդհանրապես հայտնաբերվել են Հունաստանում, Փոքր Ասիայում, Սիրիայում, Իրանում[8] և թվագրվում են ուշ հելլենիստական շրջանով և մ. թ. ա. 100 թ.։ Վերը տեսանք, որ ուսումնասիրողները «Կարենների գանձարանի» կիսագնդաձև, բուսական զարդերով թասի պատրաստման տեղի ու ժամանակի վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնում։

Անշուշտ, «Կարենների գանձարանի» և Սիսիանի թասերը հելլենիստական արվեստի արգասիք են։ Իրենց շքեղ տեսքով ու հարդարանքով նրանք հիշեցնում են հելլենիստական շրջանի «մեգարյան» կոչվող կիսագնդաձև խեցեղեն թասերը[9], որոնց վրա հանդիպում են նաև նման առևակոսներ, տերևաձև և բուսական այլ զարդեր։ Սակայն նրանց վրայի զարդամոտիվները տարածված են եղել նաև Արևելքում։ Նման առևակոսներ հանդիպում են ասորեստանյան,

[4] E. Herzfeld, The Hoard of the Karen Pahlavs, The Burlington magazin for connoiseurs, Number CCXCVIII, vol. 52, January, London, 1928, էջ 21—27, աղ. A, B; A Survey of Persian art, vol. IV, London and New York, 1938, աղ. 137, A; H. Luschey, Iran und der Western von Kyros bis Khosrow, Archaeologische Mitteilungen aus Iran, New Folge, Band I, Berlin, 1968, աղ. 16, 1։

[5] E. Herzfeld, նշվ. աշխ., էջ 21—27։

[6] D. E. Strong, Greek and Roman gold and silver plate, London, 1966, էջ 110, 121։

[7] R. Zahn, Ein Hellenistischer silberbecher im antiquarium der staatlichen museen zu Berlin, Jahrbuch des Deutschen Archaologischen instituts, Band 82, Berlin, 1967, 1968, էջ 1—14, նկ. 1, 2, 3, 4։

[8] D. E. Strong, նշվ. աշխ., էջ 108—109, G. M. A. Richter, Catalogue of Greek Antiquities Dumbarton Oaks collection, Cambridge, 1956, աղ. XIX, 30, 31.

[9] J. Schafer, Hellenistische keramik aus Pergamon, Berlin, 1968, նկ. 12, 1; H. Goldman, Excavations at Gözlu Kule Tarsus, The Hellenistic and Roman Periods, vol. I, Princeton, New Jersey, 1950, նկ. 137, 293։



Աղյուսակ II



Աղյուսակ III

ուրարտական և աքեմենյան շրջանի մետաղյա անոթների վրա, իսկ նետաբույսը հանդիպում է Առաջավոր Ասիայի վաղ հելլենիստական մետաղյա և ապակյա թասերի վրա։ Ուստի, ընդունելով հանդերձ այս թասերի հելլենիստական արվեստի արգասիք լինելը, չի կարելի անհիմն համարել Ե. Հերցֆելդի կարծիքը, որ «Կարենների գանձարանի» թասի զարդերը պարունակում են աքեմենյան արվեստին բնորոշ տարրեր, և որ դրանց արտադրության հնարավոր կենտրոններից մեկը կարող էր լինել Պարթիան։ Սակայն ամենահավանականը Դ. Սթրոնգի կարծիքն է, ըստ որի այդ թասը պատրաստվել է Սիրիայում, քանի որ Սիրիան, Փոքր Ասիան, Պերգամոնը, Հոոդոսը և ընդհանրապես Միջերկրականի արևելյան ափերը հայտնի էին արծաթյա թանկարժեք անոթների իրենց արտադրանքով[10]։ Կարելի է ենթադրել, որ «Կարենների գանձարանի» և Սիսիանի թասերը պատրաստվել են սիրիա-միջագետքյան կենտրոններից մեկում և այնտեղից տարվել Հայաստան և Պարթիա։

Հելլենիստական շրջանում և հատկապես մ. թ. ա. I դարում Հայաստանը կուլտուրական և առևտրատնտեսական սերտ կապեր ուներ սիրիա-միջագետքյան և փոքրասիական կենտրոնների հետ։ Այդ են վկայում Արտաշատից և Հայաստանի մյուս վայրերից հայտնաբերված ներմուծված խեցեղենը[11], ապակին[12], մետաղյա գեղարվեստական իրերն[13] ու նյութական մշակույթի մյուս առարկաները[14]։

Բացառված չէ նաև թասերի Հայաստանում պատրաստված լինելը։ Հայաստանում բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված կաղապարները, ոսկյա, արծաթյա և բրոնզյա թասերը, անոթները, զարդերը, գոտիներն ու արձանիկները վկայում են այն մասին, որ այստեղ վաղուց ի վեր գոյություն է ունեցել մետաղի գեղարվեստական մշակումը, երբ օգտագործվել են տեխնիկական տարբեր հնարքներ ու միջոցներ[15]։ Վերջին տարիների ուրարտական և աքեմենյան գեղարվեստական մետաղի գյուտերը թույլ են տալիս ենթադրելու, որ աքեմենյան մետաղյա փիալաների նախատիպերը պետք է փնտրել ոչ միայն Ասորեստանում, այլև Ուրարտուում։ Ուրարտական տորևտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ուրարտական և վաղ հայկական մետաղագործական իրերի միջև ուղղակի կապ կա։ Հայաստանի տերիտորիայում հումքի գոյությունը և կատարված հայտնաբերումները խոսում են այն մասին, որ աքեմենյան շրջանում այստեղ գոյություն ունեին բարձր զարգացման վրա գտնվող արհեստանոցներ։ Գյուտերից դատելով հնարավոր են համարում նույնիսկ դրանք տեղադրել Էրեբունի և Երզնկայի շրջանում և ուրարտական արհեստագործական մյուս կենտրոններում, որոնք իրենց գոյությունը պահպանել են նաև ուրարտական պետության անկումից հետո։

Ելնելով վերոհիշյալից կարելի է պնդել, որ եթե աքեմենյան շրջանում Հայաստանում գոյություն ունեին մետաղագործական զարգացած արհեստանոցներ, ապա հելլենիստական շրջանում, տնտեսական բուռն վերելքի ու առևտրի հետ կապված, այդ արհեստանոցներն էլ ավելի պետք է զարգանային և, ներից բացի, հանդես գային նորերը, հատկապես հայկական միասնական պետականության ստեղծումից հետո, մ. թ. ա. II—I դդ.։ Այդ են վկայում Հայաստանի անտիկ շրջանի քաղաքների ու մյուս հնավայրերի պեղումները։ Սակայն այս հարցի վերջնական պատասխանը կարող են տալ հե-

---

[10] A. Springer, Die Kunst des Altertums: Handbuch der Kunstgeschichte. Band I, Das Altertums, Leipzig, 1923, էջ 108—109; К. Мачабели, Позднеантичная торевтика Грузии, Тбилиси, 1976, էջ 136—147։

[11] Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 9, էջ 82—84; М. Зардарян, Амфоры из раскопок Арташата, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 266—272։

[12] Ж. Д. Хачатрян, Стеклоделие в древней Армении (II — I века до н. э.). «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 248—258; Г. А. Тирацян, О торговых связях Армении с Сирией в античное время, «Палестинский сборник», вып. 4(67), М.—Л., 1959, էջ 73—78։

[13] Ժ. Խաչատրյան, Ուշ հելլենիստական շրջանի եզակի դամբարան, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 1, էջ 55—63։

[14] Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении (VI в. до н. э. — III в. н. э.), Ереван, 1976, էջ 20—29 և այլուր, տախտ. XXI—XXIII, XCVII, XXVIII, CIV, գունավ. տախտ. I, XIX.

[15] Վ. Աբրահամյան, Ոսկերչության տեխնոլոգիան Հին Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 12, էջ 69—90։

[16] Այդ մասին գրականությունը տե՛ս Г. А. Тирацян, К вопросу о торевтике и ювелирном деле Армении в ахеменидское время, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 102—105։

տագա պեղումները, երբ ի հայտ կգան գեղարվեստական մետաղի նոր նմուշներ, որոնք հնարավորություն կտան ավելի հանգամանորեն ուսումնասիրելու Հայաստանի տորևտիկան։

Հելլենիստական շրջանում, տվյալ մշակութային արեալի մեջ ընդգրկված երկրներում հանդես եկան մի շարք մշակութային ընդհանրություններ, որոնք ոչ այնքան իրարից փոխ առնելու, որքան ամբողջ հելլենիստական Արևելքում գոյություն ունեցող ինքնատիպ մի շրջան («koïne») ստեղծող գեղարվեստական որոշակի ընդհանուր մթնոլորտի արդյունք են։ Իհարկե, գեղարվեստական այդ ոլորտի մեջ մտնող յուրաքանչյուր երկրում գոյություն ունեին տեղական առանձնահատկություններ, տարբերություններ, բայց կային նաև ընդհանուր տարրեր։ Հենց այդ ընդհանրությունն էլ հեշտացնում էր տեղական, գեղարվեստական դպրոցների փոխազդեցությունը[17]։ Երևույթները տվյալ պատմագեղարվեստական մեծ կոնտեքստից դուրս քննելիս այդ ընդհանրության արդյունք հանդիսացող շատ տարրեր հաճախ համարվում են արտաքին ազդեցության արդյունք, կամ տեղում պատրաստված շատ առարկաներ դիտվում են իբրև ներմուծված։ Բացի այդ, հելլենիստական երկրներում առաջացած արհեստագործության ու մշակույթի խոշոր կենտրոնների ավանդույթները շարունակվեցին ու զարգացում ստացան հռոմեական շրջանում[18]։ Հատկանշական է նաև, որ արտահանվում էին ոչ միայն պատրաստի առարկաներ, այլև դրանց կաղապարները, առաջնակարգ վարպետների արտադրանքից հանված պատճենները։ Վարպետներն իրենք էլ էին տեղափոխվում տեղից տեղ և հիմնում իրենց արհեստանոցները[19]։ Այս բոլոր հանգամանքներն իրենց հերթին դժվարացնում են արտադրության վայրն ու ժամանակը որոշելու գործը։

Հանված սկահակներից չորսն են քիչ թե շատ ամբողջական (աղ. I, 1, 3, III, 1, 2)։ Դրանցից երկուսը գրեթե նույն չափի են (տր. 16—16,2 սմ, բարձր. 9 սմ, ոտքի տր. 7,8—8,2 սմ), սակայն իրարից տարբերվում են ոտքերի ձևերով. մեկը, որի պսակի տակ դրսից արամեական արձանագրություն կա, ունի աստիճանաձև սահուն անցումով, սնամեջ, գեղեցիկ ոտք (քաշը 427,8 գրամ)։ Սկահակի ներսից համակենտրոն երկու շրջաններով ընդգծված է հատակը (աղ. I, 1, III, 1)։ Երկրորդն ունի շեփորաձև ոտք (աղ. I, 2)։ Երրորդը նման է երկրորդին, միայն ավելի վատ է պահպանված և չափերը քիչ ավելի փոքր են (տր. 13,4 սմ)։ Սկահակները նույնպես նորություն չեն Հայաստանի համար։ Կավե սկահակներ հանդիպում են դեռևս ուրարտական շրջանից, իսկ հելլենիստական կավե և քարե սկահակները հար և նման են վերոհիշյալ արծաթյա սկահակներին։ Նրանք գոյատևում են մինչև մ. թ. ա. I դարի վերջը, որից հետո այլևս չեն հանդիպում։ Սկահակներից ամենահետաքրքիրը առաջինն է։ Նրա վրայի արամեական արձանագրությունից իմանում ենք Սյունիքի իշխանավորներից մեկի, գուցե կառավարչի (ըդեշխի) անունը, որը թաղվել է այդ դամբարանում, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ենք ստանում Հայաստանում անտիկ շրջանում ընդունված կշռային միավորների մասին։ Ըստ Ա. Գ. Փերիխանյանի, արձանագրության վերծանությունը հետևյալն է. «Այս թասը պատկանում է Արախսզատին. արծաթի քաշն է 100 դրախմա...»[20]։ Արձանագրությունը հետաքրքրական է նրանով, որ պարունակում է մի քանի նոր տերմիններ։ Դրանցից Դամբա—«թաս» տերմինը և Արախսզատ անունը, ուսումնասիրողի կարծիքով, միջին իրանական (պարթևական) և միջին մարական ծագում ունեն, որն արդյունք է Սյունիքի աշխարհագրական դիրքի, Մարաստանի հետ ունեցած էթնիկական և կուլտուր-լեզվական ու պատմական աղերսների։ Գրության ձևով արձանագրությունը կապվում է հյուսիս-միջագետքյան արամեական ավանդների հետ[21]։ Այդ ոճի տառանիշերի մուտքը Հայաստան տեղի է ունեցել մ. թ. ա. I դարում[22], Տիգրան II-ի օրոք, երբ նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության շնորհիվ էլ ավելի ուժեղացան Հայաստանի կուլտուրական ու տնտեսական կապերը Ասորիքի ու Միջագետքի հետ։ Նման ձևով են գրված նաև Արտաշատի I բլրից հայտնաբեր-

---

17 Այդ մասին գրականությունը տե՛ս Г. А. Кошеленко, A. Perkins, The Art of Dura-Europos, Oxford, 1973 (գրախոսություն)։ «Советская археология», 1976, № 2, էջ 282։

18 «Античная художественная бронза. Каталог выставки», Л., 1973, էջ 10։

19 Այդ մասին գրականությունը տե՛ս К. В. Тревер, Бактрийский бронзовый фалар с изображением Диониса, «Труды Гос. Эрмитажа», т. V, Л., 1961, էջ 102—104։

20 А. Г. Периханян. Арамейская надпись на серебряной чаше из Сиснана, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ 78—81, նկ. 1, 2։

21 Նույն տեղում, էջ 80—81։

22 Գ. Տիրացյան, Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 4, էջ 255—256։

ված, մ. թ. ա. I դարի ապակյա դդալի[23] և չաղուրիտե ափսեի[24] վրայի արամեական արձանագրությունները։

Ինչ վերաբերում է սկահակի քաշին, ապա արձանագրության հրատարակության ժամանակ այն վերականգնված չի եղել և հաշվի է առնվել միայն թասի քաշը, որը 340 գրամ է։ Այն հաշվվել է սասանյան դրախմայի չափով, որը մոտավորապես 4 գրամ էր։ Ենթադրելով, թե թասն ունեցել է նաև կանթ, նրա կշիռը, սասանյան 100 դրախմայով, հաշվվել է մոտավորապես 380—400 գրամ[25]։ Մինչդեռ, թասի քաշը պետք էր հաշվել ոչ թե սասանյան, այլ պարթևական շրջանում դրախմայի համար ընդունված ատտիկյան կշռային սիստեմով[26]։ Սկահակի վերականգնումից, այսինքն թասը ոտքի հետ միացնելուց հետո նրա քաշը 427,8 գրամ է, որը համապատասխանում է թասի վրա նշված 100 դրախմայի ատտիկյան չափին։ Հայտնի է, որ ատտիկյան դրախման տատանվում էր 4,26—4,32 գրամների միջև։ Ուրեմն, եթե ընդունելու լինենք, որ ատտիկյան դրախմայի միջին քաշը 4,29 գրամ է և հաշվի առնենք սկահակի մաշվածությունը, ապա սկահակի սկզբնական քաշը պետք է լինի 429—430 գրամ։ Հատկանշական է, որ վերոհիշյալ կիսագնդաձև թասերը և Սիսիանի դամբարանում հայտնաբերված արծաթյա ապարանջանատիպ իրերը նույնպես պատրաստված են ատտիկյան կշռային սիստեմի համաձայն[27]։

Այս սկահակները ծառայել են իբրև ըմպանակներ և թվագրվում են մ. թ. ա. I դարով։ Սկահակների պսակների ձևերը և հատակն ընդգծող համակենտրոն շրջանները նման են վերոհիշյալ թասերին, իսկ ոտքերի նման ձևերը, ինչպես վերը նշեցինք, բնորոշ են հելլենիստական խեցեղենին և քարե սկահակներին։ Ուստի շատ հնարավոր է, որ սկահակները պատրաստված լինեն նույն սիրիա-միջագետքյան կենտրոններից մեկում, ուր պատրաստվել են թասերը (միաժամանակ կամ ժամանակի որոշ տարբերությամբ) և կամ Հայաստանում։

Այսպիսով, Հայաստանում հայտնաբերված թասերն ու սկահակները իրենց գեղարվեստական արժանիքներով չեն զիջում այլ վայրերից գտնված անտիկ շրջանի արծաթյա անոթներին։ Անտիկ շրջանի մշակույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը, ընդգրկվելով Հելլենիստական Արևելքում գոյություն ունեցող գեղարվեստական ընդհանուր ոլորտի մեջ, դարերի խորքից եկող իր մշակույթը հասցրել է զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճանի։ Այդ են վկայում նաև մետաղյա գեղարվեստական իրերը։ Նրանց թիվը թեև մեծ չէ, սակայն դրանց քննությունից երևում է, որ Հայաստանը ոչ միայն ներմուծել է բարձրարվեստ գեղարվեստական իրեր ու անոթներ, այլև ունեցել է իր սեփական արտադրությունը։

Հելլենիստական շրջանում և հատկապես մ. թ. ա. II—I դարերում մեծ հակում է նկատվում դեպի ճոխությունը։ Մարդիկ իրենց շրջապատում են գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված իրերով ու առարկաներով։ Նորոգվում է տների հարդարանքը։ Խոհանոցային սպասքը և մյուս կավանոթները փոխարինվում են արծաթով[28]։ Հարստությունն սկսում է չափվել արծաթյա գեղարվեստական իրերի քանակով։ Նշանավոր վարպետների գործերը շատ բարձր գին ունեին։ Այդ մասին վկայում են Պլինիոսը[29] և մյուս անտիկ հեղինակները։ Նրանք նշում են հռոմեական շքեղ հոգեհացերի մասին, որոնց ժամանակ օգտագործվում էր արծաթյա փառահեղ ամանեղեն[30]։ Սիսիանի իշխանական դամբարանի պեղումները թույլ են տալիս ենթադրել, որ այդ երևույթը նկատվել է նաև Հայաստանում. Սիսիանի դամբարանի նյութերի մեծ մասը մետաղյա գեղարվեստական իրեր են, որոնց մեջ գերակշռում է արծաթը։ Հայաստանում հայտնաբերված արծաթյա գեղարվեստական իրերը պատկանում էին հիմնականում վերնախավին, որն ավելի շատ էր ենթարկվում օտար ազդեցություններին։ Մետաղյա գեղարվեստական անոթներն ու առարկաները՝ ներմուծված թե տեղական, բնորոշում են հայ ազնվականության ճաշակը, նրա հակումները։ Դրանք տարբերվում էին տեղական, ավանդական, ժողովրդական արվեստից և իրենց նորա-

---

23 Ж. Д. Хачатрян, Стеклоделие в Древней Армении, էջ 256, աղ. 1, 10։

24 Б. Н. Аракелян, նշվ. աշխ., գուն. աղ. I։

25 А. Г. Периханян, նշվ. աշխ., էջ 80—81։

26 А. Н. Зограф, Античные монеты, «Материалы и исследования по археологии СССР», № 16, М.—Л., 1951, էջ 38—55։

27 Թասերի քաշն է 400,15 գրամ, 411,60 գրամ, ապարանջաններինը՝ 272,20 գրամ, 275,50 գրամ, 293 գրամ։ Ընդունված կշռաչափից եղած տատանումները մաշվածության և վատ պահպանվածության արդյունք են։

28 М. Е. Сергеенко, Ремесленники древнего Рима, Л., 1968, էջ 36։

29 Plinius, Nat. hist., XXXIII, 47, 51—55.

30 Այդ մասին տե՛ս К. Мачабели, նշվ. աշխ., էջ 16; М. Е. Сергеенко, նշվ. աշխ., էջ 36—48։

մուծություններով ազդում էին Հայաստանի հելլենիստական մշակույթի զարգացման ընդհանուր ուղղության վրա։ Հայաստանի անտիկ շրջանի հուշարձանների, հատկապես Արտաշատի, Արմավիրի, Գառնիի և մյուս հնավայրերի պեղումները վկայում են անտիկ շրջանի (մանավանդ մ. թ. ա. II—մ. թ. II դարերի) Հայաստանի մշակույթի վրա հելլենիստական աշխարհի թողած խոր ազդեցության մասին։ Այդ շրջանի Հայաստանի մշակույթը շատ ընդհանրություններ ունի հելլենիստական Արևելքի, հատկապես Սիրիայի ու Փոքր Ասիայի հետ, մտնելով սիրիա-միջագետքյան, փոքրասիական· հելլենիստական գեղարվեստական ընդհանուր արեալի («койне») մեջ։

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ·

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ТЕХНОЛОГИИ КЕРАМИКИ АСТХИБЛУРСКОГО МОГИЛЬНИКА

Среди памятников эпохи раннего железа Армении видное место занимает Астхиблурский могильник[1], комплексы которого наряду с материалами из таких широко известных памятников, как Редкин лагерь[2], Артик[3], Мецамор[4] и другие, имеет важное значение для определения культуры рассматриваемой эпохи.

Раскопки могильника Астхиблур, расположенного близ с. Енокаван Иджеванского района, были произведены С. А. Есаяном в 1966—1967 гг.; им было раскопано 26 погребений, относящихся к началу и середине I тыс. до н. э. Комплексы погребений эпохи раннего железа состоят из керамики различных форм, среди которых имеются одноручные, двуручные, с трапециевидными ручками и безручные кувшины, горшки, миски, кружки и несколько солонок. Основная масса керамики хорошо выделана, богато орнаментирована различными геометрическими узорами, гораздо реже растительным и животным орнаментами. Весь керамический материал хорошо увязывается с керамикой из памятников начала I тыс. до н. э. и находит аналогии в Дилижане, Айриванке, Кировакане, Макарашене, Кедабеке, Ходжалы и других памятниках Армении и Закавказья[5].

Вместе с керамическими изделиями были найдены различные предметы — железные кинжалы, ножи, копья, бронзовый пояс и украшения, — которые позволили датировать могильник IX—VIII вв. до н. э.[6]

Технологические вопросы изготовления керамики, впервые исследуемые здесь на материале Армении, имеют важное значение, так как «...лишь в системе технологического процесса, в его развитии, уровень и характер которого определены и обусловлены исторически, наиболее перспективным представляется оценка керамики и ее изучение как памятника материальной культуры»[7]. В настоящей статье мы рассматриваем лишь два этапа — 1) формовку, 2) обжиг и окраску — из четырех основных этапов, которые составляют технологический процесс изготовления керамики.

Формовка. На многих сосудах Астхи-

---

[1] С. А. Есаян, Астхиблурский могильник, «Вестник» АН АрмССР (обществ. науки), 1968, № 6, стр. 83—97; его же, Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, 1976, стр. 131—133.

[2] F. Bayerns, Untersuchungen über die altesten Gräber und schatzfunde in Kaukasien, Berlin, 1885; Л. С. Уварова, Коллекции Кавказского музея, т. V, Тифлис, 1902, стр. 48 и сл.; Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 64; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 196 и сл.

[3] Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963; его же, Древняя культура Ширака, Ереван, 1975, стр. 135—156.

[4] Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973։

[5] А. А. Мартиросян, указ. соч., стр. 205; Т. С. Хачатрян, Раскопки в Айриванке, «Известия» АН АрмССР (обществ. науки), 1957, № 12, стр. 93—102; С. А. Есаян, Г. А. Оганесян, Каталог археологических предметов Дилижанского краеведческого музея, Ереван, 1969.

[6] С. А. Есаян, Древняя культура..., стр. 131—133.

[7] Э. В. Сайко, Л. В. Кузнецова, Методологические основы исследования древней керамики, М., 1977, стр. 30.